



«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ՇՏԵՄԱՐԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

ՀԵՄԱՐԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԶՈՎԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Երևան 2015

Սույն ձեռնարկը մշակվել է «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության կողմից:

Ձեռնարկի մշակման աշխատանքային խումբ՝

Աշխատանքային խմբի ղեկավար՝ Արշակ Գասպարյան

Սոցիալական աշխատողների խմբի ղեկավար՝ Անուշ Դանոյան

Չետագոտող խումբ՝

Սոցիոլոգ՝ Տաթևիկ Կոթոյան

Սոցիալական աշխատող՝ Էլինե Սանթրոսյան

Սոցիալական աշխատող՝ Արմենուհի Հովհաննիսյան

Չոգեբան՝ Ինգա Մուկուչյան

Ձեռնարկն ուղղված է ոստիկանության աշխատակիցներին, կանանց և երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետներին: Այն ներառում է տեղեկատվություն գործող այն կառույցների մասին, որոնք մասնագիտական աջակցություն և ծառայություններ են մատուցում ընտանեկան բռնության զոհերին:

Հետագոտությունը պատրաստվել և տպագրվել է Եվրոպայում ամվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ դրանք չհամընկնեն ԵԱՀԿ-ի տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	6
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	7
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	9
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	10
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՁՈՅԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՍԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ՏԱՐԱԾՔԻ)	13
ՆՈՐ ՆՈՐՔ	15
Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ «Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոն	15
ՔԱՆԱՔԵՆ-ՁԵՅԹՈՒՆ	16
«Ձեյթուն» հասարակական կազմակերպություն	16
«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ «Արտակարգ իրավիճակներում գտնվող սիրիահայերի աջակցության» ծրագիր	17
«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ «Զբաղվածություն և տնտեսական կայունացում» ծրագիր	18
«ՍՕՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամ «Քանաքեռ-Ձեյթունի ընտանիքների ամրապնդման» ծրագիր	19
«Վորլդ Վիժն Հայաստան» Երևանի ՏԶԾ	21
ԿԵՆՏՐՈՆ	22
Հատուկ կարիքներով մարդկանց աջակցման «Ունիտն» հասարակական կազմակերպություն	22
«Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն	23
«Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպություն	24
ՔԱՂԱՔ ԻՋԵՎԱՆ	25
«Երիտասարդ Տավուշ» երիտասարդական հասարակական կազմակերպություն	25
«Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպություն Տավուշի մարզի մասնաճյուղ	26
«Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն հասարակական կազմակերպություն Իջևանի մասնաճյուղ	27
«Պրոգրես» կրթամշակութային հասարակական կազմակերպություն	28
«ՍՕՍ մանկական գյուղեր» Իջևանի մասնաճյուղ	29
«Վորլդ Վիժն Հայաստան» Իջևանի ՏԶԾ	30
«Քրիստոնյա կանանց ֆորում» բարեգործական հասարակական կազմակերպություն «Կյանք տուր ինձ» ծրագիր	31
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	32

«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ	32
«Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ	33
«Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն	34
«Խաղաղություն աշխարհին» բարեգործական հասարակական կազմակերպություն	35
«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն	36
«Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպություն	37
«Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպություն	38
«Հայ օգնության ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ	39
«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն	40
«Մանկական զարգացման հիմնադրամ»	41
«Մարդու իրավունքների միջազգային կոնգրես» իրավախորհրդատվական միավորում	42
«Պարզևիր Ժպիտ» երիտասարդական հասարակական կազմակերպություն	43
«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպություն	44
«Սուրբ Գևորգ» բարեգործական միջազգային միավորում	45
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՁՈՋԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ	46
ԵՐԵՎԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	48
Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ «Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոն	48
«Երիտասարդ Տավուշ» երիտասարդական հասարակական կազմակերպություն	49
«Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ	50
«Ձեյթուն» հասարակական կազմակերպություն	51
«Հայ օգնության ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ	52
«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն	53
«Մանկական զարգացման հիմնադրամ»	54
«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ «Արտակարգ իրավիճակներում գտնվող սիրիահայերի աջակցության» ծրագիր	55
«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ «Ձբաղվածություն և տնտեսական կայունացում» ծրագիր	56
«ՍՕՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամ Քանաքեռ-Զեյթունի ընտանիքների ամրապնդման ծրագիր	57
«ՍՕՍ մանկական գյուղեր» Իջևանի մասնաճյուղ	59
«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն	60
«Վորլդ Վիժն Հայաստան» Երևանի ՏՁԾ	61
«Վորլդ Վիժն Հայաստան» Իջևանի ՏՁԾ	62
ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	63
«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ	63
«Խաղաղություն աշխարհին» բարեգործական հասարակական կազմակերպություն	64
«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն	65
«Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպություն	66
«Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպություն Տավուշի	

մարզի մասնաճյուղ	67
«Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպություն.....	68
«Սեռական բռնության ճզնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպություն.....	69
«Քրիստոնյա կանանց ֆորում» բարեգործական հասարակական կազմակերպություն «Կյանք տուր ինձ» ծրագիր	70
ՀԱՇՎԱՆԴԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆՅՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	71
Հատուկ կարիքներով մարդկանց աջակցման «Ունիտն» հասարակական կազմակերպություն	71
«Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն	72
«Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն Իջևանի մասնաճյուղ	73
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	74
«Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն	74
«Մարդու իրավունքների միջազգային կոնգրես» իրավախորհրդատվական միավորում.....	76
«Պարզևիր ժպիտ» երիտասարդական հասարակական կազմակերպություն	77
«Պրոգրես» կրթամշակութային հասարակական կազմակերպություն	78
«Սուրբ Գևորգ» բարեգործական միջազգային միավորում	79

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպությունը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ իրականացնում է «Ընտանեկան բռնության հարցերով ոստիկանության կարողությունների զարգացում» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում էր ոստիկանության և ընտանեկան բռնության հարցերով շահագրգիռ այլ պետական ու ոչ պետական կառույցների միջև գործընկերության ներդրումն ու զարգացումը: Այս շրջանակներում նախատեսվում էր ստեղծել նաև ընտանեկան բռնության զոհերին ծառայություններ մատուցող կազմակերպությունների շտեմարան, որը կաջակցի ոստիկաններին գտնել և ուղղորդել անհրաժեշտ կառույցներ:

«Ընտանեկան բռնության հարցերով ոստիկանության կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում թիրախ համայնքներ են հանդիսացել ք. Երևանում՝ Ավան, Նոր Նորք, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Քանաքեռ-Զեյթուն և Շենգավիթ վարչական շրջանները, ինչպես նաև ք. Իջևանը՝ Տավուշի մարզում:

Քարտեզագրման մեջ ներառվել են վերոնշյալ համայնքներում ծառայություններ մատուցող բոլոր այն կազմակերպությունները, որոնք զբաղվում են ընտանեկան բռնության հիմնախնդրով և կամ կարող են աջակցություն տրամադրել ընտանեկան բռնության զոհերին:

Բացի թիրախ համայնքներից քարտեզագրման մեջ տեղ են գտել նաև այնպիսի կազմակերպությունները, որոնք ծառայություններ են մատուցում ամբողջ Հայաստանի Հանրապետությունում:

Քարտեզագրման նպատակն է տեղեկացնել անչափահասների գործերով և համայնքային ոստիկանության բաժանմունքների աշխատակիցներին բոլոր այն կազմակերպությունների մասին, որոնք զբաղվում են ընտանեկան բռնության հիմնախնդրով և կամ կարող են աջակցություն տրամադրել ընտանեկան բռնության զոհերին վերոնշյալ համայնքներում:

Կազմակերպությունների մասին նախնական տեղեկատվությունները հավաքվել են մասնավորապես՝ տեղեկատվական համակարգերից (Սփյուռ, Արեգ և այլն), ինտերնետային կայքերից, նախկինում հրատարակված քարտեզագրման ձեռնարկներից: Այնուհետև կատարվել է տվյալների զտում՝ տվյալ կազմակերպությունների հետ նախնական հեռախոսային հարցում կատարելով: Քարտեզագրման մեջ չեն ընդգրկվել այն կազմակերպությունները, որոնք լուծարվել են, հնարավոր չի եղել կապ հաստատել տվյալ կազմակերպության հետ, կազմակերպությունը չի ցանկացել իր մասին տեղեկատվություն տրամադրել, ինչպես նաև վճարովի ծառայություններ տրամադրող կազմակերպությունները:

Այս փուլից հետո իրականացվել է հարցաթերթիկային հարցում կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և տվյալների մուտքագրում, զտում, մշակում:

Կազմակերպությունների մասին տվյալները, որոնք տեղ են գտել քարտեզագրման մեջ նախապես համաձայնեցվել և ճշգրտվել են յուրաքանչյուր կազմակերպության հետ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Հանրայնացումը սոցիալական գործընթաց է, որի ընթացքում կառուցվում է փոխհամագործակցության դաշտ, որտեղ անհատները կամ կազմակերպությունները ակցիաների, հանրահավաքների, ֆլեշմոբերի միջոցով կիսում են իրենց մտահոգությունները, կարծիքները, գաղափարախոսությունները և փորձառությունը՝ ներգրավելով տարբեր հանրային լրատվամիջոցների, ինտերնետային խմբերի, ակումբների և այլն: Այս գործընթացի միջոցով ստեղծվում և տարածվում են ընդհանուր համոզմունքներ:

Սոցիալական աջակցությունը¹ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, կյանքի դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու, նրանց հիմնական պահանջները բավարարելու, հասարակության մեջ ինտեգրվելու, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու նպատակով ընտանիքին տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջությունն է:

Սոցիալական աջակցության հիմնական նպատակն է բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջները, ստեղծել պայմաններ հասարակության մեջ ինտեգրվելու համար, խթանել նրանց ինքնօգնության և ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը, ինչպես նաև օժանդակել նրանց սոցիալական, ֆինանսական խնդիրների լուծմանը:

Սոցիալական ծառայությունների հիմնական տեսակներն են՝

- խորհրդատվական օգնության տրամադրումը
- վերականգնողական օգնության տրամադրումը
- դրամական օգնության տրամադրումը
- բնափրային օգնության տրամադրումը
- ժամանակավոր օթևանի տրամադրումը
- խնամքի կազմակերպումը

Հոգեբանական աջակցությունը մասնագիտական միջամտության ձև է, որը տրամադրվում է անձին, ընտանիքին կամ սոցիալական խմբին իրենց հոգեբանական խնդիրների լուծման, սոցիալական աղապտացիայի, ինքնափրականացման, վերականգնման, հոգեբանական դժվար իրավիճակների հաղթահարման հարցում:

Հոգեբանական ծառայությունների հիմնական տեսակներն են՝

- անհատական հոգեթերապիա
- հոգեշտկիչ (կորեկցիոն) աշխատանք
- հոգեբանական ճգնաժամային միջամտություն
- ընտանեկան հոգեթերապիա

Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու

1 ՀՀ օրենքը սոցիալական աջակցության մասին օրենք

պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Փաստաբանի կողմից իրականացվող գործունեություն

- խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը
- ներկայացուցչություն², ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում
- քրեական գործերով պաշտպանություն (պաշտպանը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով):
- քրեական դատավարությունում օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը:

Իրավաբանի կողմից իրականացվող գործունեություն

- խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին բանավոր կամ գրավոր
- խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը
- դատական ներկայացուցչություն, իսկ քրեական գործերով քաղաքացիական հայցվորի կամ նրա օրինական ներկայացուցչի, կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցչի, ինչպես նաև քաղաքացիական պատասխանողի ներկայացուցչություն՝

2 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 3-րդ մաս.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱԳԲ** – անչափահասների գործերով բաժանմունք
- ՀՈԲ** – համայնքային ոստիկանության բաժանմունք
- ԲԿԱՄ** – բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմ
- ԸԲ** – ընտանեկան բռնություն
- ԼՂՀ** – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
- ԿԴԻԳ** – կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող
- ՀԿ** – հասարակական կազմակերպություն
- ՀՀ** – Հայաստանի Հանրապետություն
- ՄԻՊ** – Մարդու իրավունքների պաշտպան
- ՊՈԱԿ** – պետական ոչ առևտրային կազմակերպություն
- ՏԶԾ** – տարածքային զարգացման ծրագիր
- ՏԻՄ** – տեղական ինքնակառավարման մարմին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բռնության հիմնախնդիրն առկա է եղել մարդկության պատմական զարգացման ողջ ընթացքում: Թեև ընտանեկան բռնության եզրույթի իրավական կարգավորումները տարբեր երկրներում կարող են տարբեր լինել և ընդգրկել տարբեր շրջանակներ, այնուամենայնիվ, նշված հասկացության առավել ընդգրկուն ու ամբողջական սահմանում տրված է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայում:³ Ըստ նշված կոնվենցիայի՝ ընտանեկան բռնություն նշանակում է «ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողություններ, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում»:

17.12.2014 թ.-ին ընդունված Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի հոդված 2-ում տրվում է ընտանեկան բռնության սահմանումը:⁴

Ընտանեկան բռնություն՝ ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառում կամ տնտեսական միջոցներից զրկում:

Լինելով բռնության յուրահատուկ տեսակ՝ ընտանեկան բռնություն երևույթը զբաղեցրել է ամենատարբեր ոլորտների պրակտիկ հարթակն ու մասնագետների միտքը: Ընտանեկան բռնության սուբյեկտների հետ աշխատանքներ իրականացնում են սոցիալական աշխատողները, հոգեբանները, իրավաբանները, քրեաբանները: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում տարբեր ոլորտների մասնագետների սերտ համագործակցության, խնդրի վերաբերյալ առկա դիրքորոշումների վերանայման, ընտանեկան բռնության սուբյեկտներին աջակցության տրամադրման գործընթացի համակարգված կազմակերպման:

Ելնելով հիմնախնդրի կարևորությունից՝ «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպությունը ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ դեռևս 2014 թ.-ի ընթացքում իրականացրեց ընտանեկան բռնության հարցերով ոստիկանության համագործակցային մեխանիզմի ստեղծման պիլոտային ծրագիրը, որի ընթացքում ձևավորվեց ոստիկանության և համայնքում գործող այլ շահագրգիռ պետական ու ոչ պետական կառույցների միջև համագործակցային աշխատանքի մոդել՝ որպես ընտանեկան բռնության դեպքերին արձագանքման մեխանիզմ:

2015թ.ի մարտ ամսից «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպությունը ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնում է «**Ընտանեկան բռնության հարցերով Ոստիկանության կարողությունների զարգացում**» ծրագիրը: Ծրագրում ընդգրկված թիրախային համայնքներն են

3 <http://www.coe.int/t/dghl/standardsetting/convention-violence/convention/Convention%20210%20Armenian.pdf>

4 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5161>

Ավան, Նոր Նորք, Քանքեռ-Ձեյթուն, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ համայնքները և Իջևան քաղաքը: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել Ոստիկանության ստորբաժանումների կարողությունները ընտանեկան բռնության արձագանքման և համագործակցության համատեքստում:

Համագործակցային դաշտի հզորացմանն ու ընտանեկան բռնության սուբյեկտներին աջակցության տրամադրման գործընթացին նպաստելու տեսանկյունից կարևոր է համարվել ծրագրի շրջանակներում մշակել և ոստիկանության աշխատակիցներին տրամադրել տեղեկատվական ձեռնարկներ ԸԲ խնդրով շահագրգիռ կառույցների վերաբերյալ: Այդ նպատակով, «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվել է ԸԲ հարցերով զբաղվող կառույցների քարտեզագրում: Սույն շտեմարանը նպատակ ունի աջակցել ոստիկանության աշխատակիցներին ընտանեկան բռնության դեպքերի ժամանակ համապատասխան ուղղորդումներ իրականացնելու ԸԲ շահագրգիռ հասարակական կազմակերպություններ, որտեղ էլ ընտանեկան բռնության սուբյեկտները կարող են ստանալ համապատասխան մասնագիտական աջակցություն:

Տեղեկատվական գրքույկում ներկայացված են «Ընտանեկան բռնության հարցերով Ոստիկանության կարողությունների զարգացում» ծրագրի թիրախ համայնքներում, ինչպես նաև Կենտրոն համայնքում (ըստ վիճակագրական տվյալների ՀՀ-ում ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների գերակշռող հատվածը գտնվում է Կենտրոն համայնքում) գործող և ընտանեկան բռնության շուրջ աշխատանքներ իրականացնող հասարակական կազմակերպությունները: Տեղակայված կազմակերպությունների գործունեության մասին համառոտ տեղեկատվությունը և ընտանեկան բռնության դեպքերի հետ աշխատանքների իրականացման շրջանակները ներկայացված են այս տեղեկատվական գրքույկում:

Սույն քարտեզագրումը նպաստում է ընտանեկան բռնության դեմ պայքարում ոստիկանության և ԸԲ շուրջ աշխատող կառույցների միջև համագործակցության կազմակերպմանը և ԸԲ սուբյեկտներին մասնագիտական աջակցության տրամադրմանը՝ որպես ընտանեկան բռնության կանխարգելման և նվազեցման ուղղությամբ իրականացվող արդյունավետ աշխատանք:

«Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպությունը հույս է հայտնում, որ սույն տեղեկատվական ձեռնարկը իսկապես աջակից կլինի ՀՀ ոստիկանության աշխատակիցներին՝ դեպքերի շուրջ այլ մասնագետների հետ աշխատանքների համակարգված բաժանման, ԸԲ սուբյեկտներին աջակցություն տրամադրելու գործընթացի կարևոր ու պատասխանատու գործում:

Ինչպես օգտվել սույն ձեռնարկից

Ձեռնարկը բաղկացած է 2 բաժիններից: Առաջին բաժնում կարող եք ծանոթանալ ընտանեկան բռնության զոհերին աջակցություն տրամադրող կառույցներին՝ ներկայացված ըստ համայնքների, իսկ երկրորդում՝ ընտանեկան բռնության զոհերին աջակցություն տրամադրող նույն կառույցներին՝ ըստ իրենց գործունեության ոլորտի:

Ձեռնարկը պարունակում է մանրամասն տեղեկություններ ընտանեկան բռնության հիմնահարցերով զբաղվող երեսուն հասարակական կազմակերպությունների, վերջիններիս գործնական հնարավորությունների, թիրախ խմբերի և ծառայությունների մատուցման ոլորտների մասին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՁՈՋԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՍԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ՏԱՐԱԾՔԻ)

ՆՈՐ ՆՈՐՔ

1. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ «Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոն

ՔԱՆԱՔԵՆ-ՉԵՅԹՈՒՆ

1. «Ձեյթուն» հասարակական կազմակերպություն
2. «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ «Արտակարգ իրավիճակներում գտնվող սիրիահայերի աջակցության» ծրագիր
3. «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ «Զբաղվածություն և տնտեսական կայունացում» ծրագիր
4. «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ «Քանաքեռ-Ձեյթունի ընտանիքների ամրապնդման» ծրագիր
5. «Վորլդ Վիժն Հայաստան» Երևանի ՏՁԾ

ԿԵՆՏՐՈՆ

1. Հատուկ կարիքներով մարդկանց աջակցման «Ունիտոն» հասարակական կազմակերպություն
2. «Հուլիսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության
3. «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն

ՔԱՂԱՔ ԻՋԵՎԱՆ

4. «Երիտասարդ Տավուշ» երիտասարդական հասարակական կազմակերպություն
5. «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպություն Տավուշի մարզի մասնաճյուղ
6. «Հուլիսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն Իջևանի մասնաճյուղ
7. «Պրոգրես» կրթամշակութային հասարակական կազմակերպություն
8. «ՍՕՍ մանկական գյուղեր» Իջևանի մասնաճյուղ
9. «Վորլդ Վիժն Հայաստան» Իջևանի ՏՁԾ
10. «Քրիստոնյա կանանց ֆորում» բարեգործական հասարակական կազմակերպություն «Կյանք տուր ինձ» ծրագիր

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ
2. «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ
3. «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն
4. «Խաղաղություն աշխարհին» բարեգործական հասարակական կազմակերպություն
5. «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
6. «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպություն
7. «Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպություն
8. «Հայ օգնության ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ
9. «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն
10. «Մանկական զարգացման հիմնադրամ»
11. «Մարդու իրավունքների միջազգային կոնգրես» իրավախորհրդատվական միավորում
12. «Պարզևիր ժպիտ» երիտասարդական հասարակական կազմակերպություն
13. «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպություն
14. «Սուրբ Գևորգ» բարեգործական միջազգային միավորում

ՆՈՐ ՆՈՐԲ



ԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԵՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ՝

«ՀՈՂ» ԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԵՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

Ծրագիրն իրականացվում է 2012 թ.-ից: Ծրագրի նպատակն է աջակցել սոցիալապես անապահով ընտանիքներում մեծացող անչափահաս երեխաներին՝ լրացնելու կրթական ոլորտում իրենց ունեցած բացթողումները, հաղթահարելու սոցիալական և հոգեբանական հիմնախնդիրները, կանխարգելելու հակասոցիալական վարքի դրսևորումները՝ նպաստելով կիրթ և առողջ հասարակության ձևավորմանը: Կենտրոնում մատուցվում են սոցիալական, հոգեբանական, կրթական ծառայություններ, գործում են նաև արտթերապևտիկ նշանակություն ունեցող նկարչության, ձեռարվեստի, պարի խմբակներ, համակարգչի դասընթացներ:

Գործունեության ոլորտ Երեխաների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Զ. Երևան Նոր Նորքի 7-րդ զանգված

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնություն գործադրած երեխան
- Բռնության ենթարկված երեխան

Մատուցվող ծառայությունները

- Հոգեբանական աջակցություն (անհատական և խմբային խորհրդատվություն)
- Սոցիալական (կարիքների զննհատում, հիմնախնդիրների վերհանում, ծնողավարման դասընթացներ, խմբային հանդիպումներ)
- Կրթական ծառայություն (դասապատրաստումներ, նկարչության և պարի խմբակներ, համակարգչային դասընթաց)
- Ապահովման ծառայություն (տաք սնունդ, հագուստ, տրանսպորտավճար)
- Ներկայացուցչություն, շահերի պաշտպանություն

Կազմակերպություն դիմելու կարգը

- Այցելություն կազմակերպություն

Ծառայությունների մատուցման տևողությունը՝ 1-4 տարի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Նոր-Նորք 7-րդ զ. Կարախանյան 6

Հեռախոս (+374) 10 674620, (+374)10 674622
(+374) 91 0023 78

Էլ-հասցե shogh.yerevan@amaa.am

Վեբ-կայք www.amaa.am

ՔԱՆԱՔԵՆ-ԶԵՅԹՈՒՆ



«ԶԵՅԹՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

Կազմակերպությունը հիմնադրվել է 1995 թ-ին: Կազմակերպության նպատակն է հանդիսանում աջակցել հաշմանդամ երեխաների իրավունքների պաշտպանությանը: Կազմակերպության շահառուներն են հանդիսանում 0-18 տարեկան հաշմանդամ երեխաները, ինչպես նաև հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքները:

Գործունեության ոլորտ Երեխաների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող երեխան
- Բռնության ենթարկված հաշմանդամ երեխայի ընտանիքը

Մատուցվող ծառայությունները

- Շահերի պաշտպանություն

Կազմակերպություն դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Այցելություն

Ծառայությունների մատուցման տևողությունը` ըստ կարիքի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն
Դավիթ Անհաղթի 11

Հեռախոս (+374) 99 234227, (+374) 10 234227

Էլ-հասցե zina.asatryan@mail.ru



**ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՅՈՒՂԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆ**

**«ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ
ՍԻՐԻԱՀԱՅՅԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳԻՐ**

Ծրագրի հակիրճ նկարագրություն

Ծրագիրն իրականացվում է 2014 թ.-ից: «Արտակարգ իրավիճակում գտնվող սիրիահայերի աջակցության» ծրագրի հիմնական նպատակն է աջակցել անչափահաս երեխաներ ունեցող փախստական սիրիահայ ընտանիքներին:

Իրականացվում են տնտեսական կայունացմանն ուղղված դասընթացներ, կազմակերպվում են բժշկական ստուգումներ, բնակ. վարձակալության, կոմունալ ծառայությունների վարձի վճարում, տրամադրվում են դեղորայք, հագուստ, սնունդ և այլն:

Գործունեության ոլորտ Երեխաների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Ք. Երևան

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Ընտանիքը

Մատուցվող ծառայությունները

- Տնտեսական կայունացման աջակցություն (դասընթացների կազմակերպում)
- Առողջապահական ծառայություն (դեղերի տրամադրում, բժշկական ստուգումներ, բուժման գործընթացի կազմակերպում)
- Նյութական աջակցություն (տաքացուցիչ, հագուստ, սնունդ, բնակարանների վարձի տրամադրում, կոմունալ ծախսեր)

Կազմակերպություն դիմելու կարգը

- Այցելություն կազմակերպություն

Ծառայությունների մատուցման տևողությունը` առավելագույնը 1 տարի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Դավիթ Անհաղթ 11

Հեռախոս (+374) 93 328960

Էլ-հասցե info@sos-kd.am

Վեբ-կայք www.sos-kd.am



**ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՅՈՒՂԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆ**

**«ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ**

Ծրագրի հակիրճ նկարագրություն

Ծրագիրն իրականացվում է 2014 թ.-ից: «Զբաղվածություն և տնտեսական կայունացում» ծրագրի հիմնական նպատակն է կանխարգելել մանկալքությունը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվում է անչափահաս երեխաներ ունեցող խոցելի ընտանիքների անդամների մասնագիտական վերապատրաստում, տրամադրվում են աշխատանքային գործիքներ, ստեղծվում և ամրապնդվում է աշխատանք փնտրողների և գործատուների միջև կապը, տրամադրվում է աջակցություն աշխատաշուկայում մրցունակ դարձնելու ուղղությամբ:

Կազմակերպության շահառուներ կարող են դառնալ երեխա ունեցող այն ընտանիքները, որտեղ կա գործազրկություն, սոցիալական անապահովություն, հաշմանդանություն, բազմազավակություն, մշտական կացարանի և կայուն եկամուտի բացակայություն:

Գործունեության ոլորտ Երեխաների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Բ. Երևան

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Ընտանիքը

Մատուցվող ծառայությունները

- Տնտեսական կայունություն (աշխատանքային գործիքների տրամադրում)
- Կրթական ծառայություններ (մասնագիտական կողմնորոշում, դասընթացներ)

Կազմակերպություն դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Այցելություն կազմակերպություն

Ծառայությունների մատուցման տևողությունը` առավելագույնը 6 ամիս

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Դավիթ Անհաղթ 11

Հեռախոս (+374) 60 507517

Էլ-հասցե info@sos-kd.am

Վեբ-կայք www.sos-kd.am



**ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՅՈՒՂԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆ**

**«ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ՔԱՆԱԲԵՌ-ՁԵՅԹՈՒՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ» ԾՐԱԳԻՐ**

Ծրագրի հակիրճ նկարագրություն

Ծրագիրն իրականացվում է 2007 թ.-ից: Քանաքեռ-Ձեյթունի ընտանիքների ամրապնդում ծրագրի հիմնական նպատակն է ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ ընտանիքներում մնալու և բարեկեցիկ միջավայրում գտնվելու իրավունքը: Ծրագիրն ուղղված է երեխաների, ծնողների և համայնքի ակտիվացմանը: Ծրագրի շահառու կարող են դառնալ երեխա ունեցող այն ընտանիքները, որտեղ կա սոցիալական անապահովություն, ծայրահեղ աղքատություն, տանիքի բացակայություն, բազմազավակություն, երկկողմանի ծնողազրկություն, գործազրկություն, միջանձնային լարվածություն, հոգեբանական խնդիրներ, հաշմանդանություն, ընտանեկան բռնության զոհ երեխաներ, շեղվող վարք ցուցաբերող երեխաներ, միայնակ մայրեր, քրոնիկ հիվանդություն ունեցող երեխաներ, քրոնիկ հիվանդություն ունեցող խնամակալներ:

Գործունեության ոլորտ Երեխաների պաշտպանություն

**Գործունեության
ծածկույթ** Քանաքեռ-Ձեյթուն վարչական շրջան

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնություն գործադրած երեխան
- Բռնության ենթարկված երեխան
- Ընտանիքը

Մատուցվող ծառայությունները

- Հոգեբանական (անհատական խորհրդատվություն, խմբային աշխատանքներ)
- Իրավաբանական (փաստաբանական ծառայություններ, շահերի պաշտպանություն, ներկայացուցչություն)
- Սոցիալական աջակցություն (կարիքի գնահատում, ԸԲ-դեպքի բացահայտում, ուղղորդում ԸԲ մասնագիտացված ՀԿ, խորհրդատվության տրամադրում, ինքնօգնության խմբերի կազմակերպում)
- Առողջապահական (երեխաների և ծնողների համար կանխարգելիչ և բուժական օգնություն՝ դեղորայքի գնում, միջնորդություն կամ վճարում ախտորոշման և բուժման գործընթացը կազմակերպելու համար)
- Նյութական աջակցություն (սննդի փաթեթի տրամադրում, կենցաղային պայմանների տրամադրում, կենցաղային պայմանների բարելավում)
- Կրթական (դասագրքերի գումարների վճարում, գրեմական պիտույքների, դպրոցական հագուստի տրամադրում, վճարում խմբակների համար, միջնորդություն դասապատրաստման գործընթացը կազմակերպելու համար, տրանսպորտի գումարի տրամադրում կրթական հաստատությունների հասանելիությունը ապահովելու նպատակով)
- Տնտեսական կայունացում (ուղղորդում մասնագիտական դասընթացների, վերապատրաստումների, աշխատանքային գործիքների տրամադրում)

Կազմակերպություն դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Այցելություն կազմակերպություն
- Կազմակերպության տրամադրած ուղղորդման ձևի լրացում

Ծառայությունների մատուցման տևողությունը` առավելագույնը 3 տարի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Դավիթ Անհաղթ 11

Ջեռախոս (+374) 60 504514 (+374) 10 283969
(+374) 95 533318

Էլ-հասցե info@sos-kd.am

Վեբ-կայք: www.sos-kd.am



«ՎՈՐԼՂ ՎԻԺՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՐԵՎԱՆԻ ՏՁԾ

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

«Վորլդ Վիժն Հայաստան» Երևանի տարածքային զարգացման ծրագիրը (ՏՁԾ) սկսել է 2009 թ.-ից: Տարածքային զարգացման ծրագրերը (ՏՁԾ) Վորլդ Վիժնի բազմասեկտորային ծրագրերն են, որ ուղղված են երեխաների բարեկեցությանը և համայնքներում աշխատում են 15 տարի: ՏՁԾ-ները հիմնականում ֆինանսավորվում են Վորլդ Վիժնի Երեխաների հովանավորության ծրագրի կողմից: ՏՁԾ-ները կարևորում են համայնքների մասնակցությունը հասարակության անապահով խավերի կենսապայմանների բարելավմանը: Վորլդ Վիժնը համայնքների ակտիվ անդամների հետ համատեղ իրականացնում է՝ երեխայի վաղ տարիքի զարգացման, կրթության և երեխաների պաշտպանության, երիտասարդության հարցերով և տնտեսական զարգացման ծրագրեր:

Գործունեության ոլորտ Երեխաների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնության ենթարկված կինը
- Բռնություն ենթարկված երեխան

Մատուցվող ծառայությունները

- Բացահայտում
- Կարիքների գնահատում
- Ուղղորդում

Կազմակերպություն դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Այցելություն կազմակերպություն

Թիրախ խումբ՝ Մինչև 29 տարեկան

Ծառայությունների մատուցման տևողությունը՝ ըստ կարիքի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
2 Լեփսուսի փ. տուն 14

Հեռախոս (+374) 60 491002

Վեբ-կայք www.wvarmenia.am

ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱԶԱԿՑՄԱՆ «ՈՒՆԻՍՈՆ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

«Ունիսոնը» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որն աջակցում է հատուկ կարիքներ ունեցող մարդկանց բազմաբնույթ ծառայությունների տրամադրման միջոցով և նպաստում է նրանց իրավունքների մասին հասարակության իրազեկության բարձրացմանը:

Գործունեության ոլորտ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ ք. Երևան, ք. Սպիտակ և ք. Մեղրի

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնության ենթարկված կինը
- Բռնության ենթարկված երեխան
- Բռնության ենթարկված տղամարդը
- Բռնության ենթարկված տարեցը

Մատուցվող ծառայությունները

- Հոգեբանական աջակցություն (անհատական խորհրդատվություն)
- Իրավաբանական (փաստաբանական ծառայություններ, շահերի պաշտպանություն, ներկայացուցչություն)

Կազմակերպություն դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Այցելություն կազմակերպություն
- Էլեկտրոնային հարթակ
- Թեժ գիծ

Թիրախ խումբ` 0-18 տ. Երեխաներ, 19-23 տ. Երիտասարդներ

Ծառայությունների մատուցման տևողությունը` ըստ կարիքի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Դեմիրճյան 36

Հեռախոս (+374) 10 522170

Թեժ գիծ (+374) 10 522170

Էլ-հասցե unison@unison.am

Վեբ-կայք www.unison.am



**ՀՈՒՅՍԻ
ԿԱՍՈՒՐՁ**

**«ՀՈՒՅՍԻ ԿԱՍՈՒՐՁ» ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

«Հուլիսի կամուրջ» ՀԿ-ն հիմնադրվել է 1996 թ.-ին: Կազմակերպության նպատակն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների և նրանց ընտանիքների իրավունքներն ու արժանապատվությունը, ինչպես նաև նպաստել նրանց սոցիալական ներառմանը: Կազմակերպության տեսլականը հաշմանդամություն ունեցող անձի արժանապատիվ կյանքով ապրելն ու բոլորին հավասար իր երկրի ապագայի կառուցմանը մասնակցելն է:

Թիրախային խումբ են համարվում հաշմանդամություն ունեցող երեխաները և երիտասարդները:

Գործունեության ոլորտ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Ք. Երևան, Տավուշի մարզ

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնության ենթարկված երեխան և նրա ծնողը

Մատուցվող ծառայությունները

- Հոգեբանական (անհատական խորհրդատվություն)
- Կրթական ծառայություններ
- Մշակութային

Կազմակերպություն դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Այցելություն
- Էլեկտրոնային հարթակ

Ծառայությունների մատուցման տևողությունը` ըստ կարիքի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Կենտրոն
Կոռյունի 19ա, 2-րդ հարկ

Հեռախոս (+374) 10 560143

Էլ-հասցե info@bridgeofhope.am

Վեբ-կայք www.bridgeofhope.am



«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

«Օրրան»-ը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ցերեկային խնամքի կենտրոն է, որը հիմնադրվել է 2000 թ.-ին: Կազմակերպության հիմնական նպատակն է կանխել և վերացնել աղքատության և մուրացկանության տարածումը Հայաստանի երեխաների և տարեցների շրջանում, օգնել փողոցում հայտնված երեխաներին՝ ներառելով կրթական, մշակութային, հոգեբանական, բժշկական ծառայությունների մեջ, ինչպես նաև ձեռք մեկնել ճգնաժամի մեջ հայտնված ընտանիքներին, աջակցել միայնակ և անօգնական ծերերին, բացահայտել և զարգացնել երեխաների հետաքրքրություններն ու ընդունակությունները և իրականացնել մասնագիտական կողմնորոշում: Կազմակերպության շահառու կարող են դառնալ սոցիալապես խիստ անապահով իրավիճակում հայտնված, փողոցում գտնվող թափառաշրջիկ մուրացիկ 6-16 տ. երեխաները և միայնակ, կարիքավոր, մուրացիկ տարեցները:

Գործունեության ոլորտ Երեխաների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Բ. Երևան, ք. Վանաձոր

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնության ենթարկված երեխան և նրա ծնողը
- Բռնության ենթարկված տարեցը

Մատուցվող ծառայությունները

- Հոգեբանական (անհատական խորհրդատվություն)
- Սոցիալական (կարիքի գնահատում, ընտանեկան բռնության դեպքի բացահայտում, ուղղորդում ընտանեկան բռնությամբ զբաղվող մասնագիտացված ՀԿ)
- Առողջապահական ծառայություններ
- Կրթական ծառայություններ

Կազմակերպություն դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Այցելություն կազմակերպություն

Ծառայությունների մատուցման տևողությունը՝ մինչև 16 տարին լրանալը

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Երևան, Կենտրոն, Առաջին Եկմայան 6
Ֆեռախոս (+374) 10 535167
Էլ-հասցե orran@orran.am
Վեբ-կայք www.orrان.am

ՔԱՂԱՔ ԻՋԵՎԱՆ



**«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՎՈՒՇ»
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

Կազմակերպությունը հիմնադրվել է 2002 թ.-ին: Կազմակերպության նպատակն է բարձրացնել երիտասարդ սերնդի դերը հասարակության կյանքում: Կազմակերպությունը Տավուշի մարզի 20 համայնքներում հետևում է երեխաների աճին և բարեկեցությանը սոցիալական աշխատողների միջոցով: Կազմակերպության շահառուները համայնքների խոցելի (միայնակ մայր, անապահով ընտանիք) ընտանիքների երեխաներն են:

Գործունեության ոլորտ Երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Տավուշի մարզ

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնություն գործադրած երեխա և երիտասարդ
- Բռնության ենթարկված երեխա և երիտասարդ

Մատուցվող ծառայությունները

- Դեպքի վարում (տնայց, կարիքների գնահատում, ուղղորդում)
- Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող (ԿԴԻԳ) երեխաների հայտնաբերում, տվյալների մուտքագրում «Մանուկ» տեղեկատվական շտեմարան
- Ոչ ֆորմալ կրթություն
- Տիկնիկային ներկայացումների, ծննդյան միջոցառումների կազմակերպում, մուլտ հերոսների այցելություններ:

Կազմակերպություն դիմելու կարգը

- Այցելություն կազմակերպություն
- Հեռախոսազանգ

Ծառայությունների մատուցման տևողությունը` մինչև 30 տարեկան

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Իջևան, Ազատամարտիկների 4/34

Հեռախոս (+374) 60 757570, (+374) 94 006410

Էլ-հասցե maralchyan@gmail.com

Վեբ-կայք <https://www.facebook.com/EritasardTavush?fref=ts>



**«ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

Կանանց իրավունքների կենտրոնը հիմնադրվել է 1991 թվականին: Ավելի քան 16 տարի Կանանց իրավունքների կենտրոնը աշխատում է Հայաստանում կանանց և նրանց երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության հաղթահարման երեք ուղղություններով. օրենսդրական բարեփոխումներ, օժանդակ ծառայություններ և իրազեկության բարձրացման և կրթական միջոցառումներ՝ դրսևորելով ամբողջական մոտեցում խնդրի հանդեպ: Այս համակցված գործունեության նպատակն է երկրում ընտանեկան բռնության կանխարգելումը, բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաների պաշտպանությունը և բռնարարների պատժելիության մակարդակի բարձրացումը:

Գործունեության ոլորտ Կանանց իրավունքների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Տավուշի մարզ

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբը

- Բռնության ենթարկված կինը և նրա երեխան

Մատուցվող ծառայությունները

- Ազգային թեժ գիծ (անվճար հոգեբանական և իրավաբանական հեռախոսային խորհրդատվություն, ինչպես նաև սոցիալական աջակցություն ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաներին)
- Կանանց աջակցման և խորհրդատվական կենտրոն (անհատական հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն, փաստաբանական աջակցություն դատարանում և սոցիալական օգնություն)
- Ապաստարանի տրամադրում

Կազմակերպություն դիմելու կարգը

- Թեժ գիծ

Ծառայությունների մատուցման տևողությունը՝ ըստ կարիքի

Կոնտակտային տվյալներ

Հեռախոս (+374) 0263 40224

Էլ-հասցե wrcarm@arminco.com

Վեբ-կայք www.wrcorg.am



«ՀՈՒՅՍԻ ԿԱՍՈՒՐՁ» ՀԱՇՎԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒՆԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

Կազմակերպության Իջևանի մասնաճյուղը հիմնադրվել է 2003 թ.-ին: Կազմակերպության առաքելությունն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների, նրանց ընտանիքների իրավունքներն ու արժանապատվությունը և նպաստել նրանց սոցիալական ներառմանը ՀՀ-ում:

Գործունեության հիմնական ուղղություններն են՝ Կրթության մատչելիության ապահովում, սոցիալ-հոգեբանական և կրթական համայնքային ծառայություններ, շահառուների շահերի պաշտպանություն և ազդեցություն հաշմանդամության ուղղությամբ տարվող քաղաքականության և գործընթացների վրա:

Գործունեության ոլորտ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ ք. Իջևան և հարակից 21 գյուղեր

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Բռնություն գործադրած հաշմանդամ երեխան
- Բռնության ենթարկված հաշմանդամ երեխան

Մատուցվող ծառայությունները

- Հոգեբանական (անհատական)
- Իրավաբանական (խորհրդատվություններ, իրավական սեմինարներ, ծնողների կարողությունների զարգացում)
- Սոցիալական (ղեկավարում, համագործակցություն թիրախ կազմակերպությունների հետ, երեխաների ներառման ապահովում՝ ներգրավելով նրանց տարբեր խմբային պարապմունքների՝ նկարչական, ձեռքի աշխատանք, խեցեգործություն, կյանքի հմտություններ, բանավեճի ակումբ):

Կազմակերպություն դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Այցելություն կազմակերպություն

Թիրախ խումբ՝ 2-18 տարեկան

Ծառայությունների մատուցման տևողությունը՝ ըստ կարիքի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Իջևան, 4-րդ նրբանցք 2
Հեռախոս (+374) 263 35616 (+374) 98 165616
 (+374) 94 100089
Էլ-հասցե www.bridgeofhope.am
Վեբ-կայք www.bridgeofhopeijevan.blogspot.com



**«ԴՐՈԳՐԵՍ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

Կազմակերպությունը հիմնադրվել է 2010 թ.-ին: ՀԿ-ի հիմնական նպատակն է օրենքով սահմանված կարգով կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ՝ նպաստել հասարակության սոցիալ-տնտեսական, առողջապահական, գեղարվեստական, կրթական, մշակութային, տեղեկատվական, հոգևոր և մարզական ոլորտների զարգացմանը, մարդկային կայուն զարգացմանը, նրանց իրավահավասարության պաշտպանությանը, երեխաների կյանքում բացասական երևույթների հաղթահարմանը, մարզի ենթակառուցվածքների զարգացմանը, բնապահպանական խնդիրների լուծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և ընտրությունների թափանցիկության կայացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, երեխաների կյանքում բացասական երևույթների վերացմանը, աջակցությունը մարզի սոցիալ-տնտեսական սուր խնդիրների լուծմանը: Կազմակերպության շահառուներ կարող են դառնալ նաև հաշմանդամություն ունեցող անձիք, երեխաները և տարեցները:

Գործունեության ոլորտ Մարդու իրավունքների պաշտպանություն

Գործունեության ծածկույթ Տավուշի մարզ

Ընտանեկան բռնության համատեքստում կազմակերպության թիրախ խումբ

- Ընտանիք

Մատուցվող ծառայությունները

- Սոցիալական
- Առողջապահական (ուղղորդում կլինիկա)
- Կրթական (երեխաների կրթության ապահովում)
- Նյութական աջակցություն (հագուստի տրամադրում)
- Խորհրդատվության ապահովում

Կազմակերպությունը դիմելու կարգը

- Հեռախոսազանգ
- Էլեկտրոնային հարթակ

Ծառայությունների մատուցման տևողությունը՝ ըստ կարիքի

Կոնտակտային տվյալներ

Գործունեության հասցե ք. Իջևան, Անկախության 23/13
Հեռախոս (+374) 98 556800, (+374) 91 559506
Էլ-հասցե geghetsik@live.com



ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՅՈՒԴԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆ

«ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒԴԵՐ» ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱԾՅՈՒՂ

Կազմակերպության հակիրճ նկարագրություն

«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը երեխայակենտրոն կազմակերպություն է, որի հիմնական առաքելությունն է պաշտպանել երեխայի ընտանեկան միջավայրում ապրելու և հասակ առնելու իրավունքը: Կազմակերպությունը հիմնադրվել է 1989 թ.-ին՝ ի պատասխան 1988 թ.-ի դեկտեմբերի կործանարար երկրաշարժի: 1990 թ.-ին Կոտայքի «ՍՕՍ մանկական գյուղեր» բաժնից իր դռներն այն երեխաների համար, ովքեր երկրաշարժի արդյունքում կորցրել էին իրենց ծնողներին: Դա առաջին «ՍՕՍ մանկական գյուղն» էր նախկին սովետական միության երկրների տարածքում:

